

## ԴԻՄԱՌՆԱԿԱՆ ԽՕՍՔ

ԸՆԾԱՅՈՒԱԾՆԵՐԷՆ՝ ԸՆԾԱՅՈՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Արագատիպ, Կարիչ, Ծալող մենք մեթենայիքս  
նորասաց՝ Սուրբ Յակոբեանց Տրպարանի,  
Մեր առաջին հանդիսական այս շարժման մէջ  
կուտանից այսօր, ի միասին, բիւր երանի  
Հոգիներուն Յովակիմեան վաղամեռիկ  
հարազատաց, Յարուբինի և Տիրանի.  
Առնեց Եղբայրը՝ Յովակիմ, և Զարուհի  
ու Մէօնիթիպէ և Արանի, Ֆոյեր երեք.  
Մեր միջոցաւ կ'օրինեն աննեց խաղց յիշատակն  
ու աննեց լոյս անմահութեան տիւն աներեկի:  
Խոկ դուք ամենիդ որ խըմբրած էք՝ սօնելու  
Սուրբ Արոռոյս այս օրը մեծ, փունջեր բերէք.  
Պանծացուցէք աննեց անունը օրինութեամբ  
և երախտեաց հատուցումով եռանդագին:  
Բարերարները այս ազգին՝ անոր հոգուոյն  
և զոյութեան, անոր սրտին զանձն են անգին:  
Տիշել զանձնի մեծարանիով՝ պէտք է լինի  
ամէն Հայու պարտեն ու ըղձանիք կարողին:  
Յորչափ այս սուրբ Հաստատութեան հովանույն տակ՝  
այս կամարները կը պահեն ա՛յսպէս մեզ կանգուն,  
Յորչափ ատեն հրսկեն մեր վրայ՝ կրօնի զգացմամբ  
և բարութեամբ վերադիտող աչեր անեուն,  
Արքան ատեն Մեւրոպեան ձոյլ այս սառերուն  
տողաւորին մէջէն՝ ոզի մը աննըկուն  
Տընօրինէ որ հոսին միշտ — ինչպէս արիւնն  
երակին մէջ — հաւատքին խանդը, հայրենեաց  
Մածումը սուրբ, Հայ դրադութեանց եւ պատմութեան,  
ու մեծասիանց մեր լեզուին սէրը անձկայրեաց,  
Այո՛, որչափ ատեն Սիոնի այս լեռան վրայ  
կանգնի ուխտին մեր սապանակն երկնահայեաց,  
Մեր նուրնչիւնին մէջ անդադար պիտի լըսուի  
գովեստն աննեց անուան եւ խաղց յիշատակնն  
Օրինութիւն ձեզ, հարազատներդ Յովակիմեան.  
ձեր սան վերեւ, ա՛խ, բող ընդ միշտ ժրադի երկին.  
Նընջեցելոց՝ օրե՛րգ մեր ձայնն. խոկ կենդանեացո՞  
երանաւէս կեանի մաղրանի միշտ սրտազին:

